ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- նոյեմբերի 2023 թվականի №---Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 13-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169-Ն, 2013 թվականի հուլիսի 31-ի №272-Ն որոշումները և հաշվի առնելով «ԻՆՏԵՐՆԵՏ ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻՈՆ ՑԱՆՑԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի նոյեմբերի 3-ի և 6-ի հայտերը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝
   1) 2013 թվականի դեկտեմբերի 4-ի «ԻՆՏԵՐՆԵՏ ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻՈՆ ՑԱՆՑԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիա տրամադրելու մասին» №429Ա որոշմամբ տրամադրված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) №1070 լիցենզիայի գործողության ժամկետը՝ որոշման 1-ին կետում «տասը տարի» բառերը փոխարինելով «մինչև 2033 թվականի դեկտեմբերի 4-ը» բառերով, իսկ 2-րդ կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի,

   2) 2013 թվականի դեկտեմբերի 4-ի «ԻՆՏԵՐՆԵՏ ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻՈՆ ՑԱՆՑԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականու-

թյունների հատվածի օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №430Ա որոշմամբ տրամադրված ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման №1071 թույլտվության գործողության ժամկետը՝ որոշման 1-ին կետում և 2-րդ կետով հաստատված հավելվածում «10 տարի» բառերը փոխարինելով «2033 թվականի դեկտեմբերի 4-ը» բառերով,

3) 2014 թվականի հունիսի 25-ի «ԻՆՏԵՐՆԵՏ ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻՈՆ ՑԱՆՑԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №211Ա որոշմամբ տրամադրված ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման №1091 թույլտվության գործողության ժամկետը՝ որոշման 1-ին կետում և 2-րդ կետով հաստատված հավելվածում «մինչև 2023 թվականի դեկտեմբերի 4-ը» բառերը փոխարինելով «2033 թվականի դեկտեմբերի 4-ը» բառերով,

4) 2019 թվականի նոյեմբերի 6-ի «ԻՆՏԵՐՆԵՏ ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻՈՆ ՑԱՆՑԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №418Ա որոշմամբ տրամադրված ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման №1288 թույլտվության գործողության ժամկետը՝ որոշման 1-ին կետում և 2-րդ կետով հաստատված հավելվածում «մինչև 2023 թվականի դեկտեմբերի 4-ը» բառերը փոխարինելով «2033 թվականի դեկտեմբերի 4-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի դեկտեմբերի 4-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
-- նոյեմբերի 2023թ.